## ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆԵՐ

# ԱՆԱՆԻԱ Ա ՄՈԿԱՑԻ

## (946-968)

*Սկիզբը՝ 2004-ի թիվ 24*

Երկու խոսք այն մասին, թե ինչու Հայոց Արեւելից կողմերի կաթողիկոսությունը կոչվում էր Աղվանից, եւ ինչպես էին վերջինիս եւ Հայոց կաթողիկոսության փոխհարաբերությունները: Աղվանից եկեղեցին՝ որպես Հայոց եկեղեցու ենթակայության ներքո գտնվող եկեղեցի, հանդես եկավ Աղվանից թագավորության գոյության շրջանում՝ IV դարում: Մեծ Հայքի թագավորության 387 թ. բաժանումից եւ 428 թ. նրա անկումից հետո Պարսից արքունիքն արմատապես ձեւեց Այսրկովկասյան երկրների քաղաքական քարտեզը, որի արդյունքում մի շարք հայկական երկրամասեր միացվեցին հարեւան Վիրքի եւ Աղվանքի վարչական միավորներին: 428 թվին՝ Ուտիքը, իսկ 451 թ. կամ դրանից շատ չանցած՝ Արցախը, միավորվեցին Աղվանից մարզպանությանը, որի արդյունքում, ի համապատասխանություն վարչական կարգավիճակի, Ուտիքի եւ Արցախի հոգեւոր թեմերը հայտնվեցին Աղվանից եկեղեցու ենթակայության տակ: Հասկանալի է, որ Աղվանից եկեղեցին ենթարկվում էր Հայոց եկեղեցուն: Շատ շուտով հայկական երկրամասերը սկսեցին կարեւոր դեր խաղալ Աղվանից մարզպանության մեջ, իսկ երբ խազարական արշավանքների պատճառով Աղվանից կաթողիկոսանիստը Չողից տեղափոխվեց Կուրի աջափնյակը՝ Հայոց Արեւելից կողմեր, ապա Աղվանից կաթողիկոսությունը վերածվեց սովորական



հայկական կաթողիկոսության, որը լոկ ավանդույթի ուժով պահպանում էր նախկին անվանումը՝ այլեւս ոչ մի էական առնչություն չունենալով Աղվանքի հետ, եթե չհաշվենք բուն Աղվանքի տարածքում գտնվող եկեղեցական թեմերի ենթակայությունը նրան: Կապված վարչաքաղաքական բաժանման եւ հոգեւոր-եկեղեցական կառույցի հետ՝ Աղվանից անունը, քանի որ մարզպանության կազմում գտնվում էին նաեւ Ուտիքն ու Արցախը, տարածվեց նաեւ Հայոց Արեւելից կողմերի վրա՝ ստեղծելով կամ ծնելով այն թյուր կարծիքը, թե իբր դրանք Աղվանից երկրամասեր են: Իրականում, որպես երեւույթ, դա հիշեցնում էր Պրուսական թագավորության անունը, երբ վերջինս, լինելով գերմանական պետություն, պատմական իրադարձությունների բերումով՝ իր վրա էր վերցրել լիտվական պրուս ցեղի անունը:

Ավանդական պատմության համաձայն՝ որը բերում է Ստ. Օրբելյանը, Հայոց եւ Աղվանից եկեղեցիների հարաբերությունները ծնունդ են առնում Աղվանից Գրիգորիս կաթողիկոսի ժամանակներից, որին ձեռնադրել էր Գրիգոր Լուսավորիչը՝ Ուռնայր թագավորի խնդրանքով: Գրիգորիս եպիսկոպոսը, որ համարվում է Աղվանից առաջին կաթողիկոսը, Գրիգոր Լուսավորչի թոռն էր եւ զոհվեց 330 կամ 331 թվին՝ Տրդատ Գ Հայոց թագավորի մահվանից շատ չանցած: Ուռնայրը ո՛չ Գրիգորիսի ժամանակակիցն էր եւ ո՛չ էլ Տրդատի, այնպես որ նման համադրությունը ուշ ժամանակների քաղաքական ինչ-ինչ նպատակներ հետապնդող հեղինակների գործն է: Սակայն կարեւորն այդ չէ: Էականն այն էր, որ Հայոց կաթողիկոսն Արգաիի ժողովում փաստաթղթերով ցույց տվեց, որ Գրիգորիս կաթողիկոսից հետո Աղվանից եկեղեցին 440 տարի ենթարկվել է Հայոց եկեղեցուն, եւ նրանց կաթողիկոսները՝ մինչեւ Աբրահամ Աղբաթանեցին, ձեռնադրվել են Հայոց հայրապետների կողմից: Դրանից հետո քաղկեդոնականություն ընդունեց Վրաց եկեղեցին՝ Կյուրոնի գլխավորությամբ, եւ փորձեց անկախանալ Աղվանից կոչված եկեղեցին: Սակայն Աբրահամ Աղբաթանեցի եւ Հովհաննես Բագարանցի կաթողիկոսների մահից հետո Աղվանից եկեղեցու ենթակայությունը Հայոց հայրապետներից վերականգնվեց: Այս կացությունը շարունակվեց մինչեւ Եղիա Արճիշեցին, երբ Սպրամ Աղվանից տիկինն իր մերձավոր եւ սիրող Բակուրին կաթողիկոսացրեց Պարտավում՝ Ներսես անունով: Այդ կատարվեց առանց Եղիա կաթողիկոսի իմացության, որը գալիս է Հայոց Արեւելից կողմեր եւ Սպրամին ու Բակուրին իրար կապելով ու խայտառակելով՝ վերջինիս կարգալույծ է անում՝ նաեւ քաղկեդոնականությանը ծածուկ հետեւելու համար եւ նոր կաթողիկոս է ձեռնադրում: Տեղի իշխանները երդվում են նրան, որ այլեւս նման բան թույլ չեն տա: 137 տարի անց Բուղայի արշավանքների եւ Գեւորգ կաթողիկոսի գերության ժամանակ Աղվանից կաթողիկոս են ձեռնադրում կաթողիկոսի դրած եպիսկոպոսներից Հովնանին, որը փախել էր Հայոց Արեւելից կողմեր, սակայն գերությունից վերադարձած Գեւորգ կաթողիկոսը չի ճանաչում նրա ձեռնադրությունը եւ միայն Համամի խնդրանքով եւ ներումն աղերսելով՝ նրան կրկին ձեռնադրում է: Քաղաքական թոհուբոհի պայմաններում Հայոց Արեւելից կողմերում ինքնագլուխ ձեւով թերակատար կաթողիկոսներ են ձեռնադրվում 69 տարի շարունակ: Անշուշտ, խոտելի են այս թվականները, որոնք ճշտման կարիք ունեն, սակայն վիճակն ընդհանուր առմամբ ճիշտ է արտացոլված Օրբելյանի կողմից:

Համաձայնելով Հայոց Արեւելից կողմերի իշխանների խնդրանքին՝ կաթողիկոսի ընտրությունը որոշ ժամանակով հետաձգելուն՝ լավ թեկնածու գտնելու համար, Անանիան եկավ Սյունիք, որպեսզի Տաթեւում վերջացնի Հակոբ եպիսկոպոսի գործը եւս: Սակայն վերջինս ոչ զղջաց եւ ոչ էլ ներկայացավ նրան՝ փախչելով Բաղաց բերդը եւ ապավինելով Ջվանշիր իշխանին: Անանիան եւս բազմիցս իր մոտ հրավիրեց, սակայն Հակոբը, օգտվելով Բաղաց Ջվանշիր եւ Սիսականի Սմբատ իշխանների աջակցությունից, ընդդիմացավ եւ չներկայացավ: Ձմեռվա պատճառով Անանիան ստիպված էր ետ դառնալ, բայց մինչ ճանապարհ ընկնելը՝ նա ավերեց Տաթեւի եպիսկոպոսությունը եւ նզովեց իշխաններին եւ եպիսկոպոսին: Ըստ Օրբելյանի՝ դեպքերը տեղի ունեցան 950 թվի տարեգլխին: Հակոբի բռնած դիրքը ոգեւորեց Աղվանից Գագիկ լուծարված կաթողիկոսին, որը չենթարկվեց կաթողիկոսի որոշմանը: Եվ այս երկուսը 8-9



տարի գտնվում էին ապստամբ վիճակի մեջ: Անանիայի մշտական նամակագրությունը ոչինչ չտվեց, երկուսն էլ անդրդվելի մնացին: Սակայն 958 թվին մահացան Հակոբն ու Գագիկը, եւ հիշյալ երկրամասի իշխանները ձեռնադրության խնդրով դիմեցին Անանիային: 959 թվին Հայոց կաթողիկոսը երրորդ անգամ եկավ Սյունիք, հոգ տարավ Տաթեւի վերաշինությանը, ընդունեց Ջվանշիր եւ Սմբատ իշխանների մեղայականը, ազատեց նրանց բանադրանքից եւ Ջվանշիր իշխանի որդուն՝ Վահանավանքի առաջնորդ Վահանին ձեռնադրեց Սյունյաց միտրոպոլիտ: Սակայն որպես պատիժ՝ ըմբոստության համար, Սյունյաց աթոռը զրկվեց մինչ այդ ունեցած բացառիկ պատիվներից. այն է՝ «Խաչ զառաջեաւ, գաւազան մեծագին, եւ բազմական ոսկեթել»: Վահանը եպիսկոպոսապետեց 6 տարի՝ 961 կամ 962 թվից մինչեւ 967/968 թվերը: Վահանը եւ Սյունյաց իշխանները երդվեցին Հայոց հայրապետին, որ այլեւս նման բան չի կրկնվի, եւ ապստամբ եպիսկոպոսները կհանձնվեն Հայոց կաթողիկոսին:

Հայոց Արեւելից կողմերում այդ ժամանակներում մահացավ Գագիկ կաթողիկոսը, իսկ Հովնանը հեռացվել էր պաշտոնից, այնպես որ Անանիա Մոկացին Սյունիքից ուղեւորվեց դեպի Արցախական աշխարհ, սակայն դեռ կաթողիկոսի ընտրությունը չիրականացրած՝ ստիպված եղավ մեկնել Վասպուրական, որտեղ, ինչպես փորձում է Ստ. Օրբելյանի հաղորդումը մեկնաբանել Մ. Օրմանյանը, հավանաբար մահացել էր Աբուսահլ-Համազասպ Արծրունի թագավորի կինը: Սյունյաց պատմիչի խոսքերով՝ Անանիայի մեկնելուց հետո տեղի Իշխանիկ, Սենեքերիմ, մյուս Սենեքերիմ, Ջվանշիր եւ Գուրգեն իշխանները մեծապես զղջում են կատարվածի համար եւ որպես կաթողիկոսական թեկնածու՝ առաջադրում են Դավիթ Խոտակերացի անունով կրոնավորին ու ուղարկում Անանիա Ա Մոկացու մոտ ձեռնադրվելու:

Չնայած հայտնի չէ, թե որտեղ տեղի ունեցավ ձեռնադրությունը՝ Աղթամարո՞ւմ, թե՞ Արգինայում, պետք է ենթադրել, որ այնուամենայնիվ այդ իրականացվեց Արգինայում: Շնորհիվ Հայոց կաթողիկոսի համառ եւ հետեւողական քայլերի՝ Հայոց եկեղեցու պառակտման փորձերը տապալվեցին, որը համընդհանուր գոհունակություն առաջ բերեց:

Պետք է ասել, որ Սյունյաց Հակոբ եպիսկոպոսի եւ այսպես կոչված՝ Աղվանից Սահակ կաթողիկոսի ըմբոստությունը Հայոց հայրապետի գերագույն իշխանության դեմ արձագանք գտավ Հայաստանի հարավում՝ հանձինս Անձեւացյաց Խոսրով եպիսկոպոսի: Սկզբնաղբյուրներում նրա անձը հիշվում է գովեստով ու հարգանքով, սակայն նրա կյանքի մասին ու ծագման վերաբերյալ տեղեկություններ գրեթե չեն պահպանվել: Առաջին անգամ նա հիշվում է որպես փեսա Անանիա Նարեկացու հորեղբոր եւ նշանավոր Սահակ, Հովհաննես եւ Գրիգոր Նարեկացիների հայր: Հայտնի չէ, թե ինչպես է աշխարհիկ կյանքը թողել եւ հոգեւոր աստիճան ընդունել, սակայն իր արժանիքների համար հասավ Անձեւացյաց գավառի եպիսկոպոսության: Ամեն ինչից դատելով՝ Անձեւացյաց գավառի Նար գյուղից էր, որին եպիսկոպոս ձեռնադրեց Աղթամարում հաստատված վերջին կաթողիկոսը՝ մինչեւ Անանիա Ա Մոկացու աթոռակալությունը: Ըստ երեւույթին, Հակոբ եպիսկոպոսի եւ Սահակ կաթողիկոսի անհաջող փորձը ստիպեց, որ Խոսրով Անձեւացյաց եպիսկոպոսը նույնպես ենթարկվի Հայոց կաթողիկոսին: Կար մի հանգամանք եւս: Անանիա Մոկացու հեռանալն Արգինա բնավ էլ հաճելի չէր եղել Արծրունի թագավորներին, որոնք երբեմն նրա դեմ ուղղված քայլեր էլ կատարեցին: Հավանաբար դրա արտահայտություններից մեկն էլ Խոսրով Անձեւացու հարելն էր Հակոբ եպիսկոպոսին ու Սահակ կաթողիկոսին: Սակայն Խոսրովի շարժումն առանձնակի չափեր չընդունեց, քանի որ պատմությունը ոչինչ չի ասում Հայոց հայրապետի կողմից նրան հալածելու մասին: Հայոց հայրապետի եւ Խոսրով եպիսկոպոսի հաշտվելը, հավանաբար, տեղի ունեցավ Անանիա Մոկացու՝ Հայոց Արեւելից կողմերից Վասպուրական գալու ժամանակ, երբ մահացել էր Աբուսահլ-Համազասպ թագավորի կինը: Այդպես է ենթադրում Մ. Օրմանյանը, եւ այդ է հաստատում Գրիգոր Նարեկացու՝ իր հորը տված գնահատականը՝ «յոյժ հետեւողի պատուիրանացն Աստուծոյ»:

*Շարունակելի*

*Բաբկեն ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ*
*Պատմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր*

## ՄԱՍՆՈՒՐ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

# Ամանորը Սեւանի Վազգենյան հոգեւոր դպրանոցում

Հունվարի 13-ին՝ Հիսուս Քրիստոսի անվանակոչության տոնի օրը, հանդիսապետությամբ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, Սեւանի Վազգենյան հոգեւոր դպրանոցում տեղի ունեցավ ավանդույթ դարձած ամանորյա հանդիսությունը:

Առավոտյան Սեւանի Սբ. Առաքելոց եկեղեցում մատուցվեց Ս. Պատարագ: Պատարագիչն էր Մայր Աթոռի միաբան Տ. Հովակիմ աբղ. Մանուկյանը: Հայր սուրբը սրբազան արարողության ընթացքում հավուր պատշաճի քարոզ խոսեց՝ անդրադառնալով օրվա խորհրդին:

Հանդիսությունը սկսվեց միանական «Հայր մեր»-ով, Հայաստանի Հանրապետության օրհներգով եւ Վազգենյան դպրանոցի հիմնով: Ներկաներին ողջունեց Սեւանի Վազգենյան դպրանոցի տեսուչի պաշտոնակատար Տ. Մկրտիչ աբղ. Պռոշյանը՝ անդրադառնալով Հիսուս Քրիստոսի հրաշափառ Ծննդյան խորհրդին: Նա սաներին հորդորեց առավել ջանասիրությամբ ու նվիրումով լծվել մեր եկեղեցու պայծառացման ու զորացման գործին:

Այնուհետեւ ներկաների հետ իրենց մտածումներն ու մտահոգությունները կիսեցին Հուսիկ արք. Սանթուրյանը, Շիրակի թեմի առաջնորդ Տ. Միքայել եպս. Աջապահյանը, դպրանոցի դասախոս Պետրոս Բեդիրյանը, իսկ Արագածոտնի թեմում Ամենայն Հայոց Կաթողիկոսի ներկայացուցիչ Տ. Թորգոմ աբղ. Տոնիկյանն անդրադարձավ դպրանոցի անցած ուղուն:

Վերջում ներկաներին իր բարեմաղթանքներն ու օրհնությունը հղեց Ամենայն Հայոց Կաթողիկոսը: Հայոց Հայրապետն ուրախությամբ նշեց, որ Վազգենյան հոգեւոր դպրանոցն արդեն կայացած կրթական հաստատություն է, եւ որի շրջանավարտներից շատերը, որպես ձեռնադրյալ հոգեւորականներ, իրենց ծառայությունն են բերում Հայոց եկեղեցու անդաստանում: Նա հույս հայտնեց, որ վազգենյանցիներն իրենց աներեր հավատքով, նվիրյալ ծառայությամբ ու գալիքի նկատմամբ պայծառ հույսերով շարունակողները պիտի լինեն մեր նախնիների սուրբ հավատքի՝ կերտելով



մեր եկեղեցու վաղվա օրը:

*«Վստահ ենք, որ տարեցտարի այս թիվն ավելի պիտի մեծանա, եւ այս հաստատությունը կարեւորագույն կրթական օջախներից մեկը պիտի լինի մեր Առաքելական Սուրբ եկեղեցու: Եվ այստեղից պիտի հասնեն ավելի մեծ թվով եկեղեցականներ, որոնք պիտի գան լրացնելու բացը, պակասը մեր եկեղեցականաց դասի, ինչպես նաեւ իրենց աշխատանքով, նվիրյալ ծառայությամբ պիտի զորացնեն մեր Սուրբ եկեղեցին եւ բավարարեն հոգեւոր կարիքները մեր հավատավոր ժողովրդի»*,- նշեց Նորին Սրբությունն իր խոսքում:

Ավանդույթի համաձայն՝ տեղի ունեցավ նաեւ ամանորյա կաղանդչեքերի արարողությունը: Գեղարվեստական հայտագրով հանդես եկավ դպրանոցի երգչախումբը:

Հանդիսությանը ներկա էին թեմակալ առաջնորդներ, Մայր Աթոռի միաբաններ, դասախոսներ եւ հյուրեր:

# Հիսուս Քրիստոսի Անվանակոչության տոնը Մայր Աթոռ Սբ. Էջմիածնում

Հունվարի 13-ին Ս. Էջմածնի մայրավանքում, ի հիշատակումն Տիրոջ անվանակոչության, մատուցվեց Սբ. Պատարագ: Պատարագիչն էր Տ. Մուշեղ աբղ. Բաբայանը:

Տիրոջ անվանակոչության մասին վկայում է Ղուկաս ավետարանիչը. «Եվ երբ 8 օրերը լրացան, եւ նա թլփատվեց, նրա անունը Հիսուս դրվեց, ինչպես հրեշտակի կողմից կոչվել էր, երբ դեռ չէր հղացվել մոր որովայնում» (Բ 21):

«Հիսուս»-ը եբրայերեն բառ է, որ նշանակում է Փրկիչ: Այդ անունը հիշատակել էր Գաբրիել հրեշտակապետը, երբ ավետում էր Աստծո Որդու ծնունդը Կույս Մարիամից:

Հիսուս անվանը զուգահեռ Փրկչին տրվում է նաեւ Քրիստոս անունը: Այն հունարեն նշանակում է Օծյալ եւ համապատասխանում է եբրայերենի Մեսիային:

Փրկչի անվանակոչության տոնին հայոց բոլոր եկեղեցիներում մատուցվում է Սբ. Պատարագ, իսկ նախորդ օրը՝ երեկոյան ժամերգության ավարտին, կատարվում է նախատոնակի արարողություն:

*ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍԲ. ԷՋՄԻԱԾՆԻ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ*

ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

# Դասական եւ ժամանակակից հայ գրականության գրականագիտական յուրացումը



Ժամանակակից հայ գրականագիտությունն ունի երկու հիմնական գործառույթ կամ նշանակություն՝ ա) գիտական, բ) կիրառական:

Գիտական գրականագիտությունը կոչված է մանրամասների խորությամբ եւ ընդգրկման ամբողջությամբ բացահայտելու հայ գրականության պատմական եւ տեսական զարգացման օրինաչափությունները: Այն ընդգրկում է բուն գրականության պատմությունը, գրականության տեսությունը, գրական կապերը, մատենագիտությունը, բնագրագիտությունը եւ արտահայտվում գրականության պատմությունների, մենագրությունների, մատենագիտությունների (տարեգրություն, ժամանակագրություն) եւ բնագրագիտության տեսքով:

Կիրառական գրականագիտությունը կոչված է գործնական նպատակների եւ հանդես է գալիս հանրակրթական ու բարձրագույն դպրոցներին հասցեագրված դասագրքերի, ձեռնարկների, մեթոդական ուղեցույցների, քրեստոմատիաների եւ համանման տարատեսակ այլ հրատարակությունների տեսքով:

Կխոսեմ գիտական գրականագիտության մասին, բայց մինչ այդ շատ սեղմ անհրաժեշտ եմ համարում նշել, որ ամենեւին բարվոք վիճակում չէ գործնական կիրառություն ունեցող գրականագիտությունը: Հանրակրթական դպրոցը թեեւ ապահոված է դասագրքերով, բայց զգացվում է մեթոդական գրականության եւ քրեստոմատիաների խիստ պակաս: Իսկ բարձրագույն դպրոցն ընդհանրապես զուրկ է դասագիրք-ձեռնարկ հասկացությունից, եւ դա այն դեպքում, երբ խիստ պահանջարկ կա հայ բանահյուսության պատմության, հայ գրականության պատմության, հայ քննադատական մտքի պատմության, գրականության տեսության, մանկական գրականության դասագրքերի, նաեւ ռուս գրականության պատմության եւ արտասահմանյան գրականության պատմության ձեռնարկների: Վերջինները կարելի է նաեւ թարգմանել:

Այս հարցում զարմանք է հարուցում մի տխուր իրողություն: Խորհրդային ժամանակ կար ռուսամետ մտավորականության մի հոծ բանակ, որն ամեն ինչով զբաղվեց, բայց իր ջանքերը չմիավորեց հայերեն ստեղծելու ռուս գրականության պատմության մի ամբողջական ձեռնարկ՝ բանահյուսությունից մինչեւ այսօր: Հավանաբար՝ ուժը չպատեց: Ռուս գրականագետների կողքին ամաչեցին զբաղվել ռուս գրականության պատմությամբ: Գոնե կազմակերպեին ռուսերեն ստեղծված համապատասխան թարգմանությունը: Դա՛ էլ չարեցին: Եվ որպես մշակութային օղակ մնացին սոսկ անվաստակ միջնորդի եւ սպառողի դերում: Այդ մտավորականությունը կա նաեւ այսօր. մի տեսակ իր տեղը կորցրածի նման է: Հուսանք, որ գոնե ուշացումով օգտակար կլինեն երկու ժողովուրդների բարեկամությունը վկայող մի այսպիսի անհրաժեշտ հրատարակության: Հակառակ դեպքում՝ ուսանողների ձեռքին կմնա Ա. Ոսկերչյանի «Ռուս գրականություն. Ակնարկներ» (1977) թերի, սխալաշատ, գռեհիկ սոցիոլոգիզմով ներծծված, մի խոսքով՝ ձախավեր գիրքը:

Անցնենք մեր բուն խնդրին:

Գրականագիտության նշված հինգ բաժիններն էլ գործող են, բայց հավասար արդյունավետություն չեն ապահովում ընդհանուր գրական ընթացքի մեջ: Այս տեսակետից իրեն վաղուց սպառել է գրական կապերի ուսումնասիրությունը՝ իր առկա բոլոր ձեւերով: Թե՛ այս ուղղությամբ լույս տեսած ուսումնասիրությունները, թե՛ մեկը մյուսին հաջորդող ատենախոսությունները, որ հիմնականում ստեղծվում են Մ. Աբեղյանի անվան գրականության, Վ. Յու. Բրյուսովի անվան լեզվաբանության ինստիտուտներում եւ Երեւանի պետական համալսարանում, շատ պարզունակ են, միակողմանի եւ գրականագիտությանը ակնկալվող օգուտ չբերող: Հիմնավորապես պետք է վերանայել գրական կապերի հետազոտության գիտական նախադրյալները, որովհետեւ արդեն իսկ գործող սկզբունքներն այլեւս չեն կարող բավարարել արդի գրականագիտության պահանջները:

Գրականագիտության մյուս բաժիններից համեմատաբար արդյունավետ գործառույթի մեջ են գրականության պատմությունը, առանձին գրողների ստեղծագործությունների ուսումնասիրությունը եւ բնագրագիտությունը:

Տեսական վերլուծությունը հիմնականում դրական դրսեւորում ունի այս կարգի աշխատությունների մեջ, այսինքն, երբ տեսական հարցերն արծարծվում են պատմական որոշակի նյութի շրջանակներում: Իսկ զուտ տեսական հարցադրումների միտող աշխատությունները նախ՝ քիչ են եւ ապա՝ ըստ էության որեւէ տեսակարար կշիռ չունեն մեր ընդհանուր գրականագիտական գործի մեջ: Այս աշխատանքներին պակասում է ինքնուրույնությունը, ազգային ու համաշխարհային գրական փորձի միասնական ու խոր քննությունը:

Ժամանակակից հայ գրականագիտությունն ըստ էության շարունակում է խորհրդային գրականագիտության հետազոտական ավանդույթները: Վերացել են գաղափարական կաշկանդումները, ընդարձակվել է գրական նյութի շրջանակը, վերացել է արգելված գրողի, արգելված ստեղծագործության սահմանափակումը, բայց բուն հետազոտական սկզբունքի առումով կա՛մ շատ բան չի փոխվել, կա՛մ ոչինչ չի փոխվել: Խոսքը նախկինում գործող գաղափարական մեթոդի մասին չէ, որ հայտնի է մարքս-լենինյան մեթոդաբանություն եւ սոցիալիստական ռեալիզմի մեթոդ հասկացություններով: 1970-1980-ականներին էլ մենք առանձնապես տարված չէինք դրանցով: Դրանք կային, բայց հենց խորհրդային ժամանակների նշված տասնամյակներին կար նաեւ ներքին ազատությունը, եւ այդ մեթոդաբանությունն ու մեթոդը կա՛մ չէին կիրառվում, կա՛մ շրջանցվում էին, կա՛մ ձեւական բնույթ էին կրում: Իսկ այդ մեթոդի ուղղափառ հետեւորդները պարզապես դատապարտված էին գիտականորեն: Այդ շրջանում հետազոտական հիմնական ուղղվածությունը պատմակենսագրական, պատմատեսական եւ պատմահամեմատական կողմնորոշումն էր: Հիմքը գրողի ստեղծագործության ընդգրկումն էր, բնագրի վերլուծությունը, ժամանակի պատմահասարակական եւ գաղափարական բովանդակության բացահայտումը, ներքին կապերի հայտնաբերումը: Արդյունքը՝ գրողի կյանքի եւ ստեղծագործության մասին հնարավորին չափ ամբողջական ուսումնասիրություն, նրա տեղի ու դերի ճշտում գեղարվեստական մտքի պատմության մեջ: Նպատակը՝ գրողի գեղագիտական համակարգի ստեղծում:

Այս էր ե՛ւ խորհրդային ժամանակների վերջին տասնամյակներին, ե՛ւ հիմա: Գրականագիտական հետազոտության ավանդույթը նույնն է: Սա ե՛ւ լավ է, ե՛ւ վատ. լավ է ավանդույթի շարունակության առումով, վատ է թռիչքի անպատրաստության եւ նորի բացակայության տեսակետից:

Շարունակությունը էջ 7



# ԱՆԱՊԱԿ ԲԱԺԱԿԻ ԽՆԴԻՐԸ ՀԱՅ ՎԱՐԴԱՊԵՏԱԿԱՆ ՄՏՔԻ ԱՆԴԱՍՏԱՆՈՒՄ



Սկիզբը՝ 2004-ի թիվ 18-24

«Կանոնագիրք հայոց» ժողովածուում նույնպես պահպանվել են մի քանի կանոններ եւ ժողովական որոշումներ, որոնք անմիջականորեն կապված են մեզ հետաքրքրող խնդրի հետ: Մասնավորապես մեր մատենագրության մեջ, հօգուտ անապակ գինու գործածության, շատ անգամ վկայակոչվում է Մակար Հայրապետի Է կանոնը, ուր մասնավորապես ասվում է. *«Հանել ի սեղանն զհացն սուրբ՝ ջերմ ըստ առաքելոցն աւանդութեանն եւ անապակ, առանց իրիք խառնման, զի ոչ ապականացու իւիք փրկիմք, այլ անապական մարմնով անբիծ եւ անարատ գառինն»* (Կանոնագիրք հայոց, Բ, էջ 227, տ. 8-10: Այս վկայությունը՝ որպես հզոր կռվան, մեջբերված է նաեւ այլ գործերում, տե՛ս «ԱՀ», էջ 251, Աբէլ քահանայ Օղլուգեան, նշվ. աշխ., էջ 122, «Գ-Հ», էջ 595, «Գ-Թ», էջ 8, «Հանդիսարան», էջ 343, Դ-րախտ ցանկալի, էջ 340, «Լոյս», էջ 610, Կանոնք Ս. ժողովոց եւ հարց եկեղեցւոյ, պրակ Ա, խմբագրեց Արիստակէս արքեպս. Դաւթեան, Թիֆլիս, 1904, էջ 6, Թանգեան, Ա շարունակութիւն, էջ 487, 502): Պետք է նշել, որ քննական բնագրի տողատակում այլ ձեռագրեր տալիս են *զգինին անապակ, անապական մարմնով եւ արյամբ* ձեւերը, իսկ Մովսես Երզնկացու մոտ՝ *բաժակ անապակ* է: Ուստի ս. Մակար Երուսաղեմցու այս կանոնի գրության ժամանակի վերաբերյալ տարբեր կարծիքներ են արտահայտվել բանասիրության մեջ: Տողատակի վերոգրյալ ձեւերի հետ համաձայն չէ նաեւ կանոնագրքի հրատարակիչ Վազգեն Հակոբյանը: Նրա հիմնական հակափաստարկը հետեւյալն է. ինչպե՞ս կարող էր Դ դարում ապրած՝ Եկեղեցու հայրը գրել անապական բաժակի մասին, երբ այս խնդիրը Հայ Եկեղեցում առաջացել է հետագայում՝ Է-Ը դդ.-ում: *«Բանն այն է, որ Կանոնագրքի այս հատորի համահավաք բնագրի կազմման համար օգտագործած 50 ձեռագրերից 4-ը՝ hlou ունեն «զբաժակն,» իսկ մեկը՝ F «զգինին» բառերը: Այս երկու բառերը ունեցող 5 ձեռագրերը XVII դարի են, իսկ «Գիրք թղթոց»-ի տվյալը 1298 թվականի է: Ուրեմն, մնացած ձեռագրերը, որոնց մեջ եւ հնագույն ձեռագրերը չունեն «զբաժակն» կամ «զգինին» բառերը: Մի՞թե պարզ չէ, որ այդ բառն անազան ընդմիջարկություն է»*,- գրում է նա (նույն տեղում, էջ LXXXVII):

Վերլուծելով առկա բոլոր պատմական փաստերը՝ Վ. Հակոբյանը գրում է, որ այս կանոնախումբն իրավամբ Դ դարում Մակար Ա-ի նամակն է հայոց Վրթանես Կաթողիկոսին: Ինչ մնում է այն պնդմանը, որ Մակար Հայրապետը չէր կարող օգտագործել *բաժակ* կամ *անապակ գինի* արտահայտությունները, պիտի նշենք, որ դա այնքան էլ անհավանական չէ: Քանզի կարծում ենք, որ Նախնի Եկեղեցում եղել են երկու Ավանդություններն էլ, իսկ այն ժամանակ, այո՛, այս խնդիրն աստվածաբանական առումով քննարկման առարկա չէր, ուստի ամենեւին էլ բացառված չէ Մակար Հայրապետի կողմից այդ բառերի օգտագործումը: Բացի այդ, եթե մեր հայրերն այս կանոնը բերել են իբրեւ զորավոր ապացույց անապակ գինու գործածության, իսկ նրանք վստահաբար ավելի ճշգրիտ ձեռագրեր եւ աղբյուրներ են ունեցել իրենց ձեռքի տակ, ուրեմն ինչո՞ւ չվստահել նրանց: Ամեն դեպքում կարծում ենք, որ այս հարցի լուսաբանմանը կնպաստեն նորանոր գտնվելիք փաստերը, որոնք առայժմ հասու չեն մեզ զանազան պատճառներով: Գուցե այն ժամանակ հնարավոր լինի ինչ-որ ավելի հավաստի եւ ճշգրիտ բաների մասին խոսել: Բայց քանի որ փաստերը սակավ են, ուստի մեր ենթադրությունները փորձել ենք կառուցել դրանց հիման վրա:

Շարունակությունը՝ էջ 5

# ԱՆԱՊԱԿ ԲԱԺԱԿԻ

## ԽՆԴԻՐԸ ՀԱՅ ՎԱՐԴԱՊԵՏԱԿԱՆ ՄՏՔԻ ԱՆԴԱՍՏԱՆՈՒՄ

*Սկիզբը՝ էջ 4*

Անապակ գինու խնդիրն արծարծվում է նաեւ Հայոց աշխարհի առաջին լուսավորչի՝ ս. Թադեոս առաքյալի անունով մեզ հասած կանոնախմբի Չ կանոնում. *«Զհաց պատարագին յորում ատուր մատուցանիցեն՝ ի նմին ատուր եփեսցեն խաչապէս դրոշմաւ. նոյնպէս եւ զգինին սուրբ բաժակին՝ սուրբ ամանաւք հանցեն ի սուրբ սեղանն, մի՛ որ յանդգնեսցի խառնել ջուր ի յայն բաժակն, զի չէ այն աստուածահաճոյ, այլ անազորոյն մտաց. եւ որ առնէ որ զայնպիսին, չէ քրիստոնեայ, եւ նզովեալ եղիցի մինչեւ դարձցի յաղանդոյն»* (Կանոնագիրք հայոց, Բ, էջ 26, տ. 1-6: Նույն այս վկայությունը տե՛ս «ԱՀ», էջ 251, Աբէլ քահանայ Օղլուգեան, նշվ. աշխ., էջ 121, Դրախտ ցանկալի, էջ 369, Պատմութիւն ժողովոց Հայաստանեայց Եկեղեցւոյ հանդերձ կանոնադրութեամբք ի պէտս ժառանգաւորաց, աշխատասիրեց Աբէլ արքեպիսկոպոս Մխիթարեանց, Վաղարշապատ, էջ 1874, էջ 12, Կանոնք Ս. ժողովոց..., էջ 5, Թանգեան, Ա շարունակութիւն, էջ 492: Բանասիրության մեջ քննության առարկա է դարձել նաեւ այս կանոնի հեղինակային պատկանելության եւ ստեղծման դարաշրջանի խնդիրը: Հստակ է, որ այս կանոնին ավելի ստուգություն հաղորդելու համար այն վերագրել են Հայոց աշխարհի առաջին լուսավորիչ ս. Թադեոս առաքյալին: Այս կանոնախմբով զբաղված գիտնականները տարակարծիք են դրա ստեղծման ժամանակաշրջանի շուրջ՝ դնելով այն Ե-Թ դդ. մեջ, տե՛ս Կանոնագիրք հայոց, Բ, էջ XLIII-XLVI):

Անապակ եւ ջրախառն բաժակի խնդիրն իր արտացոլումն է գտել նաեւ զանազան տեսակի գրույցներում, վարքագրական աղբյուրներում: Եթե մեր Եկեղեցում ստեղծված գրույցներում փաստարկվում է անխառն գինու օգտագործման անհրաժեշտությունը, ապա մյուս աղբյուրներում՝ ընդհակառակն: Այսպես՝ Մխիթար Սասնեցի վարդապետն իր աստվածաբանական ճառերից մեկում այսպիսի մի պատմություն է մեջբերում: Նա իր ուսումնառության ընթացքում վեճի է բռնվում ուսումնակից Հովհաննես եղբոր հետ՝ տերունական բաժակի մեջ ջուր խառնելու խնդրի շուրջ: Վերջինս պնդում էր, թե՝ *«Որք արկանեն ջուր ի բաժակ արեանն Տեառն եթէ յասորւոց, եւ թէ յայլոց ազգաց իցեն, ընդ բամբասանաւք են այնպիսիքն, եւ այն նոցա ի մեղս համարեալ»* (Mxita'r Sasnec'i's theological discourses, p. 87): Սակայն Սասնեցին ընդդիմանում է նրան՝ պատճառաբանելով, որ դա նրանց նախնյաց սովորությունն է, ուստի բամբասանքի տակ չեն, սակայն մեր պարագայում նաեւ հավելում՝ *«այլ թէ մեք խոնարհիմք ի կրաւնս նոցա ջուր արկանել ի բաժակ արեանն Տեառն ընդ բամբասանաւք եմք այնուհետեւ եւ ընդ մեղաւորանաւք, զի ոչ է ըստ աւանդից սրբոց հարցն մերոց զոր առեալ ունիմք առ ի նոցանէ»* (նույն տեղում, էջ 88):

Ինչպես տեսնում ենք, Մխիթար վարդապետը շեշտում է սեփական Ավանդության պահպանման անհրաժեշտությունը յուրաքանչյուր Եկեղեցու համար, քանզի ինչպես որ մեզ համար սրբություն է անապակ գինով պատարագելը, այնպես էլ նրանց համար՝ ջրախառն գինով պատարագ մատուցելը: Սակայն վերջինս գիշերը երազ է տեսնում. եկեղեցում վերցնում է ջուրը եւ գինին եւ փորձում գինու մեջ ջուր լցնել: Բայց Ս. Սեղանի վրա հանկարծ տեսիլքի մեջ երեւում է մեկը, որ ասում է, թե ի՛նչ է նա անում: Սասնեցին էլ իր հերթին արդարանում է՝ ասելով, որ բաժակի մեջ դեռ ջուր չի խառնել: Ձայնը զգուշացնում է, որ հանկարծ նա ջուր չխառնի գինու մեջ: Մխիթարը զարթնում է, փառք տալիս ամենակալ Տիրոջը՝ իրեն ճշմարտությունը բացահայտելու եւ ցույց տալու համար: Ուստի աճապարում է իր հոգեւոր եղբոր մոտ, զղջում իր հանդիմանության համար եւ պատմում տեսած աստվածային երազը: Առաջին հայացքից շատ պարզ թվացող այս զրույցպատմությունը գալիս է մեկ անգամ եւս ցույց տալու մեզ նախնյաց Ս. Ավանդության անաղարտ պահելու անհրաժեշտությունն ու ճշմարիտ կերպի կիրառության գործադրումը մեր կյանքում:



*Շարունակությունը՝ էջ 6*

# ԳԻՏԵԼԻՔ ԵՎ ԽՈՐՀՈՒՐԴ

## ՔՐԻՍՏՈՍԻ ԾՆՈՒՆԴԸ

Հունվարի 6-ին մեր Տեր Հիսուս Քրիստոսի Ծննդյան եւ Աստվածահայտնության տոնն է: Հիսուս Քրիստոսի ծննդյան պատմությունը բոլորս էլ գիտենք, սակայն մի քանի մանրամասներ կարող են լույս սփռել այս հրաշալի իրադարձության վրա:

Այսպես, երբ Գաբրիել հրեշտակը Մարիամին հայտնեց Հիսուս Քրիստոսի ծննդյան մասին, Մարիամը հարցրեց. «Այդ ինչպե՞ս կարող է պատահել»: Քանի որ Աստված ընտրել էր ամենախոնարհ, ամենահեզ, ամենաառաքինի, Աստծուն ամենահավատարիմ կնոջը, ապա հարցն այս բխում էր ոչ թե նրա թերահավատությունից, այլ ճշմարտությունն իմանալու ցանկությունից: Ուստի, երբ հրեշտակի պատասխանը լսեց, հնչեց Նրա միանգամայն տրամաբանական հնազանդությունը. «Ահավասիկ ես մնում եմ Տիրոջ աղախինը»: Այսօր, ցավոք, բազում մարդիկ այդ հարցը տալիս են առաջին հերթին թերահավատությամբ եւ երբեմն էլ ծաղրանքով. իբրեւ թե՝ ինչպե՞ս կարող է կույսը որդի ունենալ: Սակայն Աստված մարդկանց միշտ նախապատրաստում է նման մեծ իրադարձությունների եւ հրաշքների համար, որպեսզի, երբ դրանք տեղի ունենան, մարդիկ չընկնեն գայթակղության մեջ: Շատ դեպքեր, որոնք կատարվել են Հին Կտակարանում, նախօրինակն ու ստվերն էին այն մեծ իրադարձությունների, որոնք կատարվելու էին Նոր Կտակարանում: Աշխարհի արարման ժամանակ երկիրը բույսեր աճեցրեց եւ պտղաբերեց առանց սերմի եւ առանց աշխատանքի՝ միայն Աստծո խոսքով: Ճիշտ նույն կերպ էլ այս դեպքում. առանց մարդկային սերմի, միայն Աստծո զորությամբ կույսը հղիացավ եւ որդի ծնեց:

Քրիստոս ծնվեց Բեթղեհեմում: Ավետարանում այս մասին գրված է, թե, երբ Մարիամն ու Հովսեփը Բեթղեհեմ հասան, Մարիամի ծննդաբերելու օրերը լրացան, եւ նա քարայրում ծնեց իր անդրանիկ Որդուն, խանձարուրի մեջ փաթաթեց ու դրեց մսուրի մեջ: Այն փաստից, որ ծննդաբերության ժամանակ որեւէ կողմնակի անձի ներկայություն չի հիշատակվում, եւ նշվում է, որ Աստվածամայրն ինքը Մանկանը խանձարուրի մեջ փաթաթեց, Եկեղեցու հայրերը հետեւյալ եզրակացությունն են արել.

Աստվածամայրը միայնակ՝ առանց կողմնակի օգնության ծնեց իր Որդուն, քանզի այդ ծննդաբերությունը Սուրբ Կույսի համար չէր ուղեկցվում ծննդաբերող կանանց հատուկ ցավերով:

Որոշ եկեցիներում Քրիստոսի Ծնունդը տոնում են դեկտեմբերի 25-ին: Այս տարբեր ամսաթվերի գոյության պատճառը հետեւյալն է: Նախկինում Սուրբ Ծննդյան եւ Մկրտության տոները միասին էին տոնում՝ հունվարի 6-ին, բայց հետո դա փոխվեց՝ Բեթղեհեմի եւ Հորդանանի՝ միմյանցից հեռու լինելու պատճառով: Հունվարի 6-ին մարդիկ ուխտի էին գնում Քրիստոսի ծննդյան եւ մկրտության վայրերը, սակայն շատերն ի վիճակի չէին լինում իրենց ուխտը կատարել՝ նույն օրում երկու վայրերն էլ այցելել չկարողանալով: Այդ պատճառով երուսաղեմացիները Ծննդյան տոնը փոխեցին դեկտեմբերի 25-ին, իսկ Հայաստանի քրիստոնյաներն ինչպես սովորել էին Գրիգոր Լուսավորչից, այդպես էլ պահեցին: Ուրախալի է, որ մեր ժողովուրդն այսօր եւս հավատարիմ է իր ճշմարիտ ավանդությանը. առաքյալների ու հայրերի կարգածի համաձայն՝ Փրկչի Ծնունդը տոնում է ճիշտ օրը՝ հունվարի 6-ին:

Քրիստոսի Սուրբ Ծննդյան առիթով մարդիկ միմյանց ավետիս են տալիս՝ ասելով. «Քրիստոս ծնաւ եւ հայտնեցաւ», որի պատասխանն է՝ «Օրհնեալ է Ծնունդը Քրիստոսի»:

## ԵՎ ՀԻՍՈՒՍ ԱՐՏԱՍՎԵՑ

Քրիստոս հարություն տվեց չորս օրվա մահացած Ղազարոսին: Երբ Քրիստոս պետք է Ղազարոսի գերեզմանը գնար, Ավետարանն ասում է, թե... Հիսուսն արտասվեց: Հավանաբար այս դեպքից առաջ ոչ ոք Հիսուս Քրիստոսին արտասվելիս չէր տեսել, որովհետեւ հրեաներն էլ զարմացած ասում էին. «Տեսե՛ք, թե որքան էր սիրում նրան»: Սակայն Եփրեմ Ասորին ասում է, թե Քրիստոսն առաջին հերթին արտասվում էր ոչ թե Ղազարոսի համար, այլ այն բազում մարդկանց, ովքեր մեռելների համընդհանուր հարության օրը մեռնելու են հոգով՝ իրենց անհավատության կամ էլ չար գործերի պատճառով:



# ՀԻՍՈՒՍ-ՔՐԻՍՏՈՍ

## ՊԱՅԾԱՌԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

Քրիստոսն աշակերտներից երեքի՝ Պետրոսի, Հակոբոսի եւ Հովհաննեսի հետ բարձրացավ լեռ եւ նրանց առաջ պայծառակերպվեց, ապա աշակերտներին երեւացին Մովսես ու Եղիա մարգարեները, որ խոսում էին Քրիստոսի հետ: Այդ ընթացքում մի լուսավոր ամպ նրանց վրա հովանի եղավ. ամպից մի ձայն եկավ ու ասաց. «Դա՛ է Իմ սիրելի Որդին, որին հավանեցի, դրա՛ն լսեցեք» (Մատթ. ԺԷ 5, Մարկ. Թ 6, Ղուկ. Թ 35): Առաքյալները զարհուրած երեսի վրա ընկան, իսկ երբ աչքերը բարձրացրին, Հիսուսից բացի ոչ ոքի չտեսան: Մովսեսը ներկայացնում է օրենքը, իսկ Եղիան՝ մարգարեներին: Մովսեսին Տերը մեռելներից, իսկ Եղիային՝ ողջերից բերելով՝ ցույց տվեց Իր իշխանությունը ե՛ւ մեռելների, ե՛ւ ողջերի վրա: Պայծառակերպությամբ աշակերտները Քրիստոսին տեսան Իր ողջ փառքի եւ կատարյալ իշխանության մեջ:

Պայծառակերպության տոնը ժողովրդի մեջ ավելի շատ հայտնի է Վարդավառ անունով: Այս անվանումը բացատրելով՝ սբ. Գրիգոր Նարեկացին ասում է, որ Քրիստոս պայծառակերպության ժամանակ վարդի պես բացվեց՝ ցույց տալով Իր աստվածությունը:

Վարդավառին միմյանց վրա ջուր ցողելը ժողովրդական սովորություն է: Սա, անշուշտ, իր սկզբնական ծագմամբ կապ չունի քրիստոնեության հետ: Պարզապես քրիստոնեությունը հեթանոսությունից մնացած եւ ժողովրդի մեջ մեծապես տարածված սովորություններին տվել է քրիստոնեական նոր իմաստ, որպեսզի մարդիկ ե՛ւ պահպանեն ժողովրդական գեղեցիկ սովորույթները, ե՛ւ միաժամանակ չշեղվեն ճշմարիտ աստվածպաշտությունից: Այդպես էլ ջուրը՝ որպես համաշխարհային ջրհեղեղի, որպես մկրտության ու վերածնության, մաքրության եւ հոգեւոր սննդի խորհրդանշան, միմյանց վրա ցողելը ազգային գեղեցիկ ավանդույթ է: Ցավով պետք է նշենք, որ Հայաստանի որոշ մարզերում Վարդավառը տոնում են մշտապես հուլիս ամսվա վերջերին եւ Վարդավառ ասելով հասկանում ուտել-խմելու, քեֆ անելու օր: Շատերը գաղափար իսկ չունեն այն մասին, որ Վարդավառը հենց Հիսուս Քրիստոսի Պայծառակերպության տոնն է: Դժբախտաբար քիչ չեն այն մարդիկ, որոնց գիտելիքները Վարդավառի մասին սահմանափակվում են միայն իրար վրա ջուր ցանելով: Հետեւաբար մեր բոլորի պարտքն է նման մարդկանց տեղեկացնել Վարդավառի իրական խորհրդի մասին, որպեսզի նրանց միտքը նյութականից կարողանա բարձրանալ դեպի հոգեւորը:

Պայծառակերպության տոնի առնչությամբ հայ քրիստոնյաները պարտավոր են իմանալ նաեւ, որ, ըստ Հայ Առաքելական Եկեղեցու վարդապետության, Քրիստոսի մարմինն անապական էր ինչպես հարությունից հետո, այնպես էլ հարությունից առաջ: Մեր մարմիններն ապականացու են, եւ ապականությունն առաջացել է մեղքի պատճառով: Իսկ Քրիստոսի մարմինն անապական է, որովհետեւ մարդանալով՝ Նա ծնվել է առանց ադամական մեղքի եւ աստվածային զորությամբ՝ միայն մեկ ծնողից: Ոմանք ընդդիմանալու համար մատնանշում են Քրիստոսի ուտելը, սակայն, ինչպես գիտենք, Քրիստոսը կերավ նաեւ հարությունից հետո (Ղուկ. ԻԴ 43, Գործք Ժ 41): Սակայն Նրա ուտելը մեր ուտելուց տարբերվում է. Քրիստոսը երբեք ավելորդ ծոռում չի ունեցել, ինչպես ապականացու մարմինները, քանի որ Նրա մարմինն անապական է: Մենք այդպիսի մարմին կունենանք հարությունից հետո: Այսպիսի մարմինն ունի 4 հատկություն՝ անապական է, թեթեւ, թափանցիկ (այսինքն՝ նյութական արգելքների միջով թափանցելու, անցնելու կարողություն ունեցող), պայծառ: Եվ այս վերոհիշյալ հատկությունները երեւացին հենց Քրիստոսի երկրային կյանքի ընթացքում: Նրա մարմնի թափանցիկությունը երեւաց Սբ. Կույս Մարիամից ծնվելու ժամանակ. ինչպես փակ դռներով մտավ Իր աշակերտների մոտ, այնպես էլ ծնվեց Սբ. Կույսից՝ անխախտ թողնելով նրա կուսության կնիքը: Նրա մարմնի թեթեւությունը տեսանելի դարձավ, երբ քայլեց ծովի վրայով, պայծառությունը՝ Թաբոր լեռան վրա այլակերպվելով, իսկ վերնատանը Նա Իր անապական մարմինը բաշխեց՝ որպես սուրբ հաղորդություն: Հայ Առաքելական Եկեղեցու այս վարդապետությունը մենք պետք է մեր մտքում ունենանք մանավանդ այն ժամանակ, երբ մոտենում ենք Հաղորդության՝ ճաշակելու Քրիստոսի անապական մարմինն ու անապական արյունը:

## ՔՐԻՍՏՈՍԻ ՎԱՐՇԱՄԱԿԸ

Հովհաննես ավետարանիչը մի հետաքրքիր տեղեկություն է հաղորդում Քրիստոսի թափուր գերեզմանի վերաբերյալ: Երբ Հովհաննեսը Պետրոսի հետ դատարկ գերեզման է մտնում, տեսնում է, որ վարշամակը, որ Քրիստոսի գլխին էր, առանձին ծալված եւ դրված էր մի կողմում: Շատ ուշագրավ է այս տեղեկությունը, քանի որ ծալված վարշամակը ցույց է տալիս, որ Քրիստոսի մարմինը չեն գողացել, որովհետեւ գողը չէր ծալի վարշամակը եւ խնամքով մի կողմ դնի:

*Շարունակելի*

*Տ. Ադամ քհն. ՄԱԿԱՐՅԱՆ*

Գեւորգ Զ Ամենայն Հայոց Կաթողիկոս

# ՀՐԱՇՔԻ ՏԵ՞ՆՉ, ԹԵ՞ ՀԱՒԱՏ

## անտիպ քարոզներից



### Ա
### Հրաշատենչ ոգի

Դժուար թէ Ս. Գրքում կարելի լինի ցոյց տալ մի այլ գիրք, որ այնքան հեգնուած լինի, որքան Յովնանու գիրքը՝ իր հրաշապատում պատմուածքների հետեւանքով: Կէտ ձուկը կլանում է Յովնանին եւ երրորդ օրը փսխում ծովափին, դդմենին, որ այնքան արագ աճում է եւ իր ստուերի տակ պատսպարում Յովնանին եւ նոյնքան արագ էլ թառամում, գիտէ՞ք, թէ այս բոլորը ո՛րքան առատ նիւթ է տուել ծաղրի ու ծանակի:

Ս. Գրքի հեղինակութիւնը ընդունող կրթուած հաւատացեալներից շատերն էլ անշուշտ մտածել ու մտածում են, թէ արդեօք աւելի լաւ չէ՞ր լինի, որ Յովնանու գիրքը ամենեւին չլինէր Ս. Գրքում, որպէսզի թէ՛ հաւատացեալները եւ թէ՛ թերահաւատները չգայթակղուէին:

Զարմանալ կարելի է միայն, թէ ինչպէ՛ս միամիտ են առաջինները, եւ ինչպէ՛ս սխալւում՝ երկրորդները:

Յիսուս էլ է մատնանշում Յովնանու գիրքը, բայց ո՛չ նրա արտաքին հրաշալի պատմուածքների համար: Յովնանու գիրքը մեր աչքն ու ականջը հրաշալի պատմուածքներով զարմացնելու համար չէ՛ գրուած եւ Ս. Գրքի մէջ մտած, այլ մեր խիղճը յուզելու եւ զարթեցնելու նպատակով: Հէնց այս հրաշապատում մարգարէական գիրքն է, որ ամէնից աւելի ընդունակ է բժշկելու մեր հիւանդութիւնը՝ մեր հրաշք որոնող ոգին: Եւ ահա այս տեսակէտով Յիսուս մատնանշում է Յովնանու գիրքը՝ ասելով. «Ձեզ այլ նշան չի տրուի, բայց եթէ Յովնանու նշանը»:

Ինչպէ՞ս հասկանալ Փրկչի այս խօսքերը: Յովնանը Նինուէում հրաշք չգործեց, այլ ապաշխարութիւն քարոզեց, որի հետեւանքով դարձի եկան այդ մեծ քաղաքի թագաւորից սկսած մինչեւ վերջին քաղաքացին: Ահա այն մեծ հրաշքը, որ կատարուեցաւ Նինուէում. այդ մեծ հրաշքն էր, որ պիտի կրկնուէր նաեւ Իսրայէլի մէջ: Յիսուսի հանդէս գալով եւ քարոզութեամբ դարձի պիտի գար Իսրայէլը, բայց, աւա՜ղ, այդ հրաշքն այն ժամանակ չկրկնուեց:

Ինչո՞ւ. որովհետեւ Իսրայէլը պահանջում էր աչք շլացնող հրաշք, իսկ Յիսուս ձգտում էր յուզել նոցա սիրտը, զարթեցնել նոցա խիղճը: Եւ այս հակադրութիւնն է, որ այնքան սիրուն արտայայտել է Աւետարանը՝ ասելով. «Նինուէացիք դատաստանի կելնեն այս ցեղի դէմ եւ կդատապարտեն նրան, որովհետեւ Յովնանի քարոզութեան շնորհիւ ապաշխարեցին եւ հաւատացին, այնինչ Յովնանից մեծն է այստեղ, բայց լսողն ու հաւատացողը չկայ»:

Այսպէս էր հին Իսրայէլը:

Մենք ինչպէ՞ս ենք մտածում այս խնդրի մասին. ի՞նչ է մեր ներքին համոզումը: Արդեօք մենք էլ հին Իսրայէլի նման հրաշք որոնողներ չե՞նք:



Պատմում է, որ Գերմանիայում, մեծ պատերազմից յետոյ, սոցիալիստական շարժման կողմնակից աստուածուրաց մէկը մի մեծ ժողովում յայտարարում է. «Ես կամենում եմ ձեզ ապացուցանել, որ Աստուած չկայ. եթէ Աստուած կայ, որին հաւատում են քրիստոնեաները, բնական է, որ կլսէ իմ յայտարարութիւնը եւ իհարկէ չի հաւանի ու կվշտանայ: Եթէ իրօք Նա կայ, որին ես չեմ հաւատում, թող ինձ տեղն ու տեղը կայծակահար անէ. այն ժամանակ ես ձեր աչքի առաջ կմեռնեմ, եւ դուք իրաւունք կունենաք հաւատալու, որ Աստուած կայ: Այլապէս պարզ է, որ Աստուած չկայ»:

Ի՛նչ մանկամիտ եւ ամբոխային տրամաբանութիւն:

Կարելի՞ է հաւատալ, որ այս մանկամիտ եւ ամբոխային տրամաբանութիւնը ազդեցութիւն գործէ ժողովրդի վերայ: Իհարկէ ո՛չ: Բայց արի տես, որ անհաւատների կողմից միշտ կրկնուել եւ կրկնւում է այս տրամաբանութիւնը, եւ դժբախտաբար երբեմն էլ գտնւում են միամիտ մարդիկ, որոնք հակւում են այս դատողութեան: Այսպիսիների համար պահանջ է, որ գերբնական հրաշք կատարուի իրենց աչքի առաջ, որպէսզի հաւատան:

Այս պատմութիւնը վկայում է, որ այս հարցում ներկայ ժամանակը նման է Յիսուսի ժամանակին: Եւ յիրաւի, մի՞թէ մենք ազատ ենք հրաշատենչ ոգուց. մի՞թէ մենք հրաշք չենք պահանջում, որ հաւատանք. մի՞թէ մեր կեանքն էլ լի չէ մոմենտներով, երբ մտածում ենք, թէ ի՛նչ լաւ կլինէր, որ հրաշք կատարուէր, եւ մեր բոլոր կասկածները փարատուէին: Օրինակ, երբ կարկուտը անխնայ ոչնչացնում է պտղալից պարտէզներ ու հացահատիկների հարուստ դաշտեր եւ աշխատաւոր գիւղացուն յուսահատեցնում: Երբ անշիգար մահը անժամանակ խլում տանում է ծաղկող մատղաշ կեանքը՝ բզկտելով զգայուն մօր սիրտը: Երբ անարդարութիւնն ու չարութիւնը ամէն օր կեանքի մէջ յաղթանակում են եւ ճշմարտութիւն ու արդարութիւն որոնողներին յուսահատութեան դուռը հասցնում, մի՞թէ այն ժամանակ մեր ներքին աշխարհում էլ չի ծնում ցանկութիւն աստուածային մի հրաշք տեսնելու, որպէսզի անհաւատները ամաչեն, կասկածամիտները հաւատի գան, եւ հաւատացողները հաստատուեն իրենց հաւատի մէջ, եւ ընդհանրապէս ամէնքի մէջ հաստատուի այն համոզմունքը, թէ կայ Աստուած, որ մեր բարի հայրն է եւ մտածում ու հոգում է բոլորիս մասին: Եւ ի՞նչպէս վշտանում ենք, որ այս հրաշքը չի կատարւում:

Այո՛, նա չի կատարւում եւ չպիտի էլ կատարուի: Ինչո՞ւ. որովհետեւ հրաշքը, ինչպէս բնութեան բոլոր երեւոյթները, ըմբռնւում է մեր զգայարանքներով եւ ուրեմն նոցա նման էլ մտքով ձեռք բերուած համոզմունք է եւ ո՛չ հաւատ:

Եւ ո՞վ կարող է վստահացնել մեզ, թէ կատարուած հրաշքը գերբնական ծագումն ունի, յատուկ նպատակով կատարուած մի գործ է եւ ո՛չ խաբեբայութիւն կամ պատահաբար տեղի ունեցող մի բնական երեւոյթ:

*Շարունակելի*

Յիսուս նոր էր բժշկել այսահար համրին եւ լեզուն բացել, երբ խռնւում է նրա շուրջը հետաքրքրութեամբ լցուած ահագին բազմութիւն՝ է՛ւ հաւատացեալներ, է՛ւ թերահաւատներ, է՛ւ բարեմիտներ, է՛ւ չարամիտներ, է՛ւ կրթուածներ, է՛ւ անկիրթներ, որոնցից ոմանք ականատես էին եղել Յիսուսի կատարած բժշկութեան, իսկ միւսները միայն լսել էին Նրա մասին. եւ սակայն բոլորն էլ արտաքոյ կարգի հրաշք էին խնդրում, որ հաւատան:

Յիսուս մերժում է նրանց խնդիրը եւ դատապարտում նոցա հրաշատենչ ոգին:

Այս մերժման պատմութիւնը տալիս է մեզ Ղուկաս աւետարանիչը. «Երբ ամբոխը խռնուեցաւ Յիսուսի շուրջը, Նա ասաց. «Այս ազգը Աստծուն անհաւատարիմ է. հրաշք է պահանջում. սակայն այլ նշան չի տրուի նրան, բայց եթէ Յովնան մարգարէի նշանը: Ինչպէս Յովնանը հրաշք էր Նինուէացոց համար, այնպէս նաեւ «Մարդու Որդին» այս ազգի համար: Հարաւի թագուհին դատաստանի կելնէ այս ազգի դէմ եւ կդատապարտէ նրան, որովհետեւ հետաքրքրուեցաւ եւ աշխարհի հեռաւոր ծայրից եկաւ Սողոմոնի իմաստութիւնը լսելու, այնինչ Սողոմոնից մեծն է այստեղ, եւ հետաքրքրուողն ու լսողը չկայ: Նինուէացիք կբողոքեն այս ազգի դէմ եւ կդատապարտեն նրան, որովհետեւ Յովնանի քարոզութեան շնորհիւ ապաշխարեցին եւ հաւատացին, այնինչ Յովնանից մեծն է այստեղ, եւ հաւատացողը չկայ» (հմմտ. Ղուկ. ԺԱ 29-32):

Յիսուս վերոյիշեալ քարոզով բաց է անում մեր աչքերը, որ տեսնենք եւ ջոկենք հրաշք որոնող ոգին հրաշք ծնող հաւատից, առաջինը մերժենք եւ երկրորդը ընդունենք ու պահենք:

---

*Սկիզբը՝ էջ 5*

# ԱՆԱՊԱԿ ԲԱԺԱԿԻ

## ԽՆԴԻՐԸ ՀԱՅ ՎԱՐԴԱՊԵՏԱԿԱՆ ՄՏՔԻ ԱՆԴԱՍՏԱՆՈՒՄ

Հետաքրքիր մի զրույց է պահպանվել է նաեւ Ղազար Ջահկեցի Հայրապետի աստվածաբանական գրվածքում: Աշակերտը մեկ օր հարցնում է իր վարդապետին՝ ասելով, որ ըստ Կղեմեսի՝ Ներսես Շնորհալի Հայրապետը եւ Ներսես Լամբրոնացին *«ծածուկ ի սուրբ խորհուրդն ջուր ի կիր արկանէին, եւ ասէին միշտ լինէր որ ընդհանրական ժողով առնէաք եւ յայտնի հաստատէաք զջուր պատարագին»* (Դրախտ ցանկալի, էջ 374-375):

Վարդապետը նշում է, որ գիտեր աշակերտի մտածման մասին եւ ասում, որ ինքը բաջատեղյակ է այդ սուտ խոսքերին, *«սակայն միտս դիւրահաս՝ ըմբռնել ոչ կարէի ի փոփոխական տարակուսանացս»* (նույն տեղում, էջ 375): Եվ մի ուրբաթ «գիշերիս յիններորդում ժամուն» երազ է տեսնում. իբր թե մի տան մեջ էր, եւ նրան հայտնվում են երկու սեւ հանդերձներով կրոնավորներ: Մեկը Ներսես Կլայեցին էր *«երկայնահասակ սպիտակամարմին ալեխառն եւ զարմանահրաշ»*, իսկ մյուսը՝ հավանաբար Լամբրոնացին՝ *«միջահասակ ցորենագոյն սեւաամօրուս եւ գանգրահեր քաղցրահայեաց մեծին դիմօր հրեշտակակերպ ախորժելի եւ ցանկալի տեսողաց, որ եւ ես ոչ կարէի համարձակ հայիլ ի ճառագայթաշող երեսս նոցին»* (նույն տեղում): Եվ Շնորհալի Հայրապետն այս ամենին պատասխանում է. *«Զուր է բանքն Կղեմէսի ի վերայ մեր, քանզի հաստատուն եւ անշարժ կամք մեր ի վերայ սուրբ դաւանութեանց եկեղեցւոյս հայաստանեայց, եւ եմք շինեալք եւ կազմեալք ի վերայ հիման կարողիկե եւ առաքելական մերոյս Սիօնի»* (նույն տեղում, էջ 376): Կղեմեսը Լամբրոնացու մասին ասում է, որ Տարսոնի ժողովի ժամանակ դիտավորությամբ է խոսել՝ ընդդեմ լինելով Հայ Եկեղեցու հայրերին եւ ժողովներին: Սրան Լամբրոնացին պատասխանում է. *«....զոր ինչ ասացի ի հանդիսի ըստ աւանդութեան հայաստանեայց եկեղեցւոյ, գրեալ կնքեցի եւ ետու ի պահեստ առն միոջ մեծահաւատի եւ բարեպաշտի, որ էր ազգաւ հայ: Իսկ յետ մահուան իմոյ արք ոմանք երկաքանչք, ըստ ախորժակաց իւրեանց գրելով այլայլեցին զբանս իմ, զոր ի տնէ եղիցի զխատուցումն նոցին»* (նույն տեղում, էջ 376-377): Այնուհետեւ նրանք անհայտանում են, իսկ Ջահկեցին զարթնում է: Նա խրատում է իր աշակերտին եւ ասում. *«Քանզի ասէ սուրբ Շնորհալին Ներսէս, ջուրն ի լուացումն ապաշխարութեան, արիւնն յաղբումն խորհրդին: Ջուրն ի լուացումն մեղուցելոց, ի մահ նորա մկրտելոց, արիւնն ի սնունդ մաքուր հոգւոց, առ ի Քրիստոս տղայացելոց: Եւ երանելին Ներսէս Լամբրոնացին ի մեկնութեան սաղմոսին ասէ, ո՞ւր են այնորիկ որ զսուրբ խորհուրդն ջրով ապականեն: Եւ դարձեալ ասէ, զսորա մարմին յստակն կենդանացար, զսորա արիւն յլմպելն փրկեցար, ընդ սմա յերկինս բարձրացար»* (նույն տեղում, էջ 378): Ղազար Կաթողիկոսի այս զրույցից երեւում է, որ ինչ-որ մարդիկ, այնուամենայնիվ, ստապատիր բաներ են վերագրել Հայ Եկեղեցու դավանության այնպիսի ջերմեռանդ պաշտպանների, ինչպիսիք Ներսես Շնորհալին ու Ներսես Լաբրոնացին էին՝ փորձելով նրանց բերանով ապացուցել իրենց ասածը (Մ. Օրմանեան, Ազգապատում, հ. Բ , Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 2001, էջ 2127):

Ուղղափառ Եկեղեցու վարքագրական աղբյուրներում այսպիսի մի դեպք է պատմվում ս. Ակակիոսի մասին, որն ապրել է Թեոդոսիոս Բ-ի թագավորության օրոք՝ Ե դարի առաջին կեսերին: Ինչ-որ մի ժամանակ հայկական Մելիտենեում ահավոր երաշտ էր, որը կարող էր նաեւ սովի պատճառ դառնալ: Ժողովուրդն այս ամենի պատճառով ավելի ու ավելի էր տրտնջում: Բոլորը գալիս են ս. Ակակիոս եպիսկոպոսի մոտ, որպեսզի նա Աստծո ողորմությունը հայցի իրենց համար: Նա իր մոտ է հավաքում ժողովրդին, գնում ս. Եվստաթեոսի եկեղեցին, որը քաղաքից դուրս էր, նրա բարեխոսությունը խնդրում Քրիստոսի մոտ, որպեսզի Աստված անձրեւ պարգեւի: Բաց դաշտում Ակակիոսը Ս. Սեղան է պատրաստում եւ սկսում արցունքոտ աչքերով Ս. Պատարագ մատուցել: Ապավինելով Տիրոջ ողորմությանն ու մարդասիրությանը՝ նա գինուն ջուր չի խառնում, այլ աղոթում է Աստծուն, որպեսզի Նա անձրեւի միջոցով խառնի Ս. Բաժակը: Նույն աղբյուրն ավելացնում է, որ այնքան ուժեղ էր սրբի աղոթքը, որ Աստված անձրեւ է տեղացնում, գինուն ջուր խառնում, երկրային երաշտը փարատում եւ ժողովրդին ուրախություն պարգեւում (Училище благочестия или примеры христианских добродетелей, С-Петербург, 1903, стр. 423):



*Շարունակելի*

Տիգրան սրկ. Բաղումյան

ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

# Դասական եւ ժամանակակից հայ գրականության գրականագիտական յուրացումը



*Սկիզբը՝ էջ 4*

Գիտական գրականագիտությունն իր հերթին շերտավորված է. 1. գիտական գրականագիտություն, որ պահպանում է ակադեմիական պահանջների չափանիշը, 2. գիտականության միտող գրականագիտություն, որ փորձում է պահպանել ակադեմիական պահանջների չափանիշը, 3. գիտականակերպ գրականագիտություն, որը կեղծ է, արտագրված է, հարմարեցված է: Վերջինը առավել չափով հանդիպում է հատկապես անցած երկու տասնամյակներին պաշտպանության ներկայացված ատենախոսությունների մեծ մասի մեջ:

Պահանջները շատ են իջեցված: Երիտասարդ մասնագետի համար որպես գիտության վերջին նվաճումն է համարվում նրա ղեկավարի կամ պաշտպանության հետ անմիջականորեն առնչվող անձանց ստեղծագործությունը: Գիտությունը շատ է անձնավորված, շատ ատենախոսություններ ակնհայտորեն հեռու են գրականագիտական որեւէ լուրջ խնդիր լուծելուց, դրանց մեծ մասը վաճառքի հանված շարադրություններ են, որոնց հասցեատերերը հայտնի են:

Այս հեռապատկերով գրականագիտությունը, նաեւ քննադատությունը դադարում են նոր առողջ համալրում ստանալ...

Գրականագիտությունը հետաքրքիր է իր բազմազանությամբ: Բազմազանությունը պայմանավորված է գրականագիտական դպրոցների եւ անհատականությունների գոյությամբ:

Արդյոք կա՞ն հայ գրականագիտության մեջ ցայտուն արտահայտված գրականագիտական դպրոցներ: Կարելի է ցայտուն բառը հանել՝ արդյոք կա՞ն գրականագիտական դպրոցներ:

Ես այն կարծիքի եմ, որ այդպիսիք չկան: Գրականագիտական դպրոցը լուրջ գաղափարագիտական արտահայտություն ունեցող հետազոտական ուղղություն է, իր հիմնական գաղափարախոսով ու հետեւորդներով եւ ամենակարեւորը՝ հետազոտության արդյունքներով՝ գրքերով ու հրապարակումներով:

Ես հակված եմ մեր գրականագիտության բազմազանությունը տեսնել անհատականությունների մեջ, ընդ որում՝ ոչ այնքան անհատականությունների ցայտուն բազմազանության, որքան գիտական նկարագրերի, խառնվածքների ու նախասիրությունների տարբերության մեջ: Տարբեր վաստակի, տարբեր հետաքրքրությունների, հետազոտական տարբեր հակումների պատկանող անհատականություններ, որոնցով պայմանավորված է ժամանակակից հայ գրականության առկա վիճակը:

Այստեղ նպատակահարմար է թվարկել անուններ, որոնք ընդհանուր համապատկերի մեջ առանձնանում են իրենց վաստակով ու գործունեությամբ՝ Սերգեյ Սարինյան, Ալմաստ Զաքարյան, Սարգիս Հարությունյան, Ալբերտ Մուշեղյան: Կան նաեւ մոտակա տարիներին կյանքից հեռացած եւ հիշյալ անուններին սերնդակից այլ հեղինակություններ, որոնք եւս իրենց վաստակն ունեն այս ասպարեզում՝ Էդվարդ Ջրբաշյան, Սուրեն Աղաբաբյան, Հրանտ Թամրազյան, Պողոս Խաչատրյան: Այս ասպարեզում այսօր իրենց մասնագիտական գործունեությունն են ճշտում, ճշգրտում, շարունակում, լրացնում ու ամբողջացնում նաեւ միջին ու երիտասարդ սերունդի այլ գրականագետներ եւս:

Ժամանակաշրջանի ընդհանուր գրականագիտական-քննադատական մտայնությունն ամբողջությամբ ընդգրկելու համար ցանկանում եմ նշել նաեւ գրողների, որոնց մասնակցությունը ժամանակի գեղագիտության ձեւավորման գործին անուրանալի է: Խոսքը հատկապես Պ. Սեւակի, Վ. Դավթյանի, Հ. Սահյանի եւ Հ. Մաթեւոսյանի մասին է: Որպես ապացույց կարելի է հիշել նրանց գրքերն ու մամուլում ցրված հոդվածները, որոնց վերջերս եկան ավելանալու Հ. Սահյանի եւ Հ. Մաթեւոսյանի համապատասխան ժողովածուները: Ընդհանուր գրականագիտական գործի մեջ գրողների քննադատական ժառանգությունն անպայման ունի իր անփոխարինելի տեղը:

Նշված գրականագետների գործունեության վերլուծությունը անհրաժեշտ նախապայման է քննադատական միտքն ընդհանրացնելու եւ առաջ շարժվելու համար: Դա այդպես: Իսկ հիմա խոսքս շարունակելու եմ հայ գրականության գրականագիտական յուրացման տեսանկյունով:

*Շարունակելի*

***Դավիթ ԳԱՍՊԱՐՅԱՆ***
***Բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր***



# ՇԵՆՈՒԴԱ Գ — ՔՐԻՍՏՈՍԻ ԱՍՏՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ

## ՄԱՍ Ա

## ՔՐԻՍՏՈՍԻ ԱՍՏՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՍՈՒՐԲ ԵՐՐՈՐԴՈՒԹՅՈՒՆ

### ԳԼՈՒԽ Բ
### ՏԵՐ ՀԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԸ ՀԱՅՐ ԱՍՏԾՈ ՈՐԴԻՆ Է



Տեր Հիսուս Քրիստոսը Հոր Որդին է

*Սկիզբը՝ 2004-ի թիվ 23-24*

*14. Նույն կապը հստակ երեւում է նաեւ Առակաց գրքում:*

Գրված է. «Ո՞վ ելավ երկինք եւ իջավ: Ո՞վ քամիներն Իր գոգում հավաքեց: Ո՞վ ամփոփեց ջրերն Իր հագուստի մեջ: Ո՞վ պատեց երկրի ծագերը: Ի՞նչ է անունը Նրա, կամ ի՞նչ է Նրա Որդու անունը...» (Առակ. Լ 4): Այստեղ խոսվում է ոչ թե Աստծո բազում զավակներից մեկի մասին, այլ մեկ որոշակի՛ Որդու՝ Աստծո նույն բնությամբ ու էությամբ:

*15. Ծովի վրայով քայլելու հրաշքը ցույց է տալիս նաեւ Տեր Քրիստոսի Աստվածորդի լինելը:*

Այս հրաշքը ցույց է տալիս Տեր Քրիստոսի աստվածությունը, որովհետեւ նրանում տեսնում ենք բնության վրա գերբնական իշխանություն: Տեր Հիսուսը քայլեց ծովի վրայով մի սքանչելի ու գերբնական ձեւով, որ երբեւէ չէր տեսնվել նախկինում: Ուստի ս. Պետրոսն ասաց Նրան. «Տե՛ր, եթե Դու ես, հրամայի՛ր ինձ ջրի վրայով գալ Քեզ մոտ», եւ երբ Տերը թույլ տվեց, Պետրոսը Տիրոջ զորությամբ քայլեց ջրի վրայով: Բայց երբ կասկածեց, սկսեց ընկղմվել, եւ Տերը փրկեց նրան: Այնուհետեւ Ավետարանն ասում է. «Նրանք, որ նավակում էին, մոտեցան երկրպագեցին Նրան՝ ասելով. «Արդարեւ Դու Աստծո Որդին ես»» (Մատթ. ԺԴ 25-33):



Արդյո՞ք նրանք նկատի ունեին սովորական աստվածորդիությունը, որն ունեն մնացած մարդիկ: Իհա՛րկե ոչ: Սովորական որդիությունը չի կարող դրսեւորվել ջրի վրա քայլելով կամ մեկի թույլ տալով իր աշակերտներին, որ նրանք նույնպես սա անեն, ինչպես ինքը: Հետեւաբար, Հիսուսին երկրպագելիս նրանք փաստորեն խոստովանեցին, որ Նրա որդիությունը եզակի է, ո՛չ նման ուրիշների որդիությանը, այնպիսին, որ ունի արտասովոր հրաշագործ զորություն եւ ջրի ու քամու վրա իշխանություն:

*16. Նրա աստվածության նույն հրաշագործ զորության պատճառով Նաթանայելն ընդունեց, որ Նա Աստծո Որդին է:*

Երբ Տերն ասաց Նաթանայելին. «Նախքան Փիլիպպոսի քեզ կանչելը, երբ թզենու տակ էիր, տեսա քեզ», Նաթանայելը հասկացավ, որ Տերն ունի անհայտն իմանալու կարողություն՝ կամ դա տեսնելով, կամ իմանալով Նաթանայելի կյանքից ինչ-որ գաղտնի պատմություն: Ուստի Նաթանայելը պատասխանեց Նրան. «Ռա՛բբի, Դո՛ւ ես Աստծո Որդին» (Հովհ. Ա 48-49): Անշուշտ Նաթանայելը նկատի չուներ ամբողջ մարդկությանը հատուկ որդիությունը, այլ այն, որն ունի Աստվածության հատկություններից, այսինքն՝ անհայտն իմանալու կարողություն:

Տեր Քրիստոսը հավանություն տվեց Նաթանայելի նման ընկալմանը եւ նրա հավատը զորացնելու համար մի ուրիշ բան էլ ավելացրեց՝ ասելով. «Հավատում ես, որովհետեւ ասացի քեզ, թե տեսա քեզ թզենու տա՞կ: Սրանից ավելի մեծերն էլ կտեսնես... Կտեսնեք երկինքը բացված եւ Աստծո հրեշտակներին, որ բարձրանում ու իջնում են Մարդու Որդու վրա» (Հովհ. Ա 50-51):

*17. Հարյուրապետի՝ Քրիստոսին իբրեւ Աստծո Որդի հավատալու պատճառը նույնպես մի հրաշք էր:*

Այս մասին գրված է մեր ուսուցիչ ս. Մատթեոսի Ավետարանում. «Իսկ հարյուրապետը եւ նրանք, որ նրա հետ պահպանում էին Հիսուսին, երբ տեսան երկրաշարժն ու պատահածները, խիստ վախեցան եւ ասացին. «Արդարեւ՛ Աստծո Որդի էր սա»» (Մատթ. ԻԷ 54): Տես նաեւ Մարկ. ԺԵ 38-39 համարները:

Երբ նրանք տեսան երկրաշարժը եւ այն խավարը, որ խաչելության ժամանակ պատեց ամբողջ երկիրը ժամը վեցից մինչեւ ինը, այսինքն՝ ուղիղ կեսօրին, հավատացին եւ ասացին. «Արդարեւ՛ Աստծո որդի էր սա»: Սրանով նրանք նկատի ունեին իհարկե ա՛յն որդիությունը, որն Աստվածության նույն էությունից է եւ ունի բնության վրա իշխելու կարողություն: Հետեւաբար, ինչպես Աստվածաշունչն է ասում, նրանք «խիստ վախեցան»:

Հավանաբար նրանց հավատն առավել զորացավ, երբ «զինվորներից մեկը տեգով խոցեց Նրա կողը, եւ անմիջապես արյուն ու ջուր դուրս եկան» (Հովհ. ԺԹ 34):

*18. Տիրոջ մկրտության ժամանակ տեղի ունեցած հրաշքը Հովհաննես Մկրտչին դրդեց վկայելու, որ Տեր Հիսուսն Աստծո Որդին է:*

Ս. Հովհաննես Մկրտիչը վկայեց՝ ասելով. «Ես չգիտեի Նրան, սակայն Նա, Ով ինձ ուղարկեց ջրով մկրտելու, Նա՛ ասաց ինձ. «Ում վրա կտեսնես, որ Հոգին իջնում ու նստում է, Նա՛ է, որ մկրտում է Սուրբ Հոգով»: Եվ ես տեսա ու վկայեցի, որ սա՛ է Աստծո Որդին» (Հովհ. Ա 33-34):

Ս. Հովհաննես Մկրտչի եւ մարգարեի վկայած որդիությունը սովորական չէ, այլ այնպիսին, որը հաստատված է Հիսուսի աստվածության վկայությունը ցույց տվող հրաշքով: Այլեւ, Մկրտիչը նույն առիթով ասում է. «Սա է Նա, ում մասին ասում էի, թե ինձանից հետո գալիս է մի Մարդ, *ով ինձանից առաջ էր*» (Հովհ. Ա 30), այն դեպքում, որ Տեր Հիսուսը ծնվել է Մկրտչից վեց ամիս հետո:

*19. Տեր Քրիստոսի աստվածորդիությունը խոստովանվեց ի ծնե կույր մարդու կողմից՝ հրաշքով բժշկվելուց հետո:*

Հրաշքի կատարումից հետո Տեր Հիսուսը հանդիպում է այդ մարդուն եւ հարցնում նրան. «Դու հավատո՞ւմ ես Աստծո Որդուն»: Մարդը պատասխանում է. «Տե՛ր, ո՞վ է, որ հավատամ նրան»: Եվ Տերն ասում է նրան. «Ե՛վ տեսար նրան, եւ՛ դա նա է, ով խոսում է քեզ հետ»: Եվ մարդն ասում է. «Հավատո՛ւմ եմ, Տե՛ր», եւ երկրպագում է Նրան (Հովհ. Թ 35-38):

*Շարունակությունը՝ էջ 8*

# ՇԵՆՈՒԴԱ Գ ՔՐԻՍՏՈՍԻ ԱՍՏՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ



Սկիզբը էջ 7

Այս զրույցը սովորական որդիության մասին չէր, որ հատուկ է բոլոր մարդկանց, այլապես ի ծնե կույրը չէր հարցնի. «Ո՞վ է նա, Տեր», այլ կասեր. «Մենք բոլորս էլ Աստծո որդիներ ենք: Ես նույնպես Աստծո որդի եմ»: Բայց դա մի որդիություն էր, որ կարիքն ուներ հավատի ու հրաշքի եւ այդ մարդուն դրդեց երկրպագելու Տիրոջը որպես Աստծո Որդու:

Այս հրաշքի կարեւորությունը շատ մեծ է՝ շնորհիվ Տեր Հիսուսի այն հայտարարության, որ Ինքն Աստծո Որդին է, եւ Նրա կոչի, որ մարդիկ հավատան դրան:

*20. Հավատալու համար, որ Տեր Քրիստոսն է Աստծո Որդին, քարոզության եւ բացատրության անհրաժեշտություն կար:*

Սա երեւում է այն պատմությունից, ուր եթովպացի ներքինին, ով առանց իմաստները հասկանալու կարդում էր Եսայու մարգարեությունները Տեր Քրիստոսի մասին, հանդիպում է Փիլիպպոսին: Փիլիպպոսը բացատրում է Եսայու գրքի տվյալ գլուխը եւ ներքինուն քարոզում Քրիստոսին: Ուստի եթովպացին խնդրում է մկրտել իրեն, եւ Փիլիպպոսն ասում է. «Եթե ամբողջ սրտովդ հավատում ես, կարելի է», ինչին ի պատասխան՝ ներքինին ասում է. «Հավատո՛ւմ եմ, որ Հիսուս Քրիստոսն է Աստծո Որդին» (Գործք Ը 28-37): Իսկ սովորական որդիությունը կարիք չունի բացատրության կամ քարոզության, որովհետեւ բոլոր մարդիկ էլ ունեն այն:

Այս նույնը վերաբերում է նաեւ Մարթայի դավանությանը: Տեր Քրիստոսը բացատրում է նրան, որ Ինքն է հարությունն ու կյանքը, եւ ասում. «Ով հավատում է Ինձ, թեկուզ մեռնի, կապրի»: Եվ Մարթան ասում է. «Այո՛, Տեր, ես հավատացի, որ Դու ես Քրիստոսը՝ Աստծո Որդին, որ գալու էր աշխարհ» (Հովհ. ԺԱ 25-27): Անշուշտ նա նկատի ունի այն որդիությունը, որն ունի հրաշքներ գործելու զորություն: Սա երեւում է Մարթայի «որ գալու էր աշխարհ» խոսքից, որը նշանակում է, թե Հիսուսն այս աշխարհից չէ, այլ եկել է այստեղ:

*21. Այս որդիությունը հայտարարվել է Տեր Քրիստոսի կողմից բազմաթիվ առիթներով:*

Այս հայտարարությունը որոշակի է Նրա այն խոսքում, որով ի ծնե կույրին կոչ է անում հավատալու (Հովհ. Թ 35-37), եւ Թիվատիրայի Եկեղեցու հրեշտակին ուղղված Նրա խոսքում. «Այսպես է ասում Աստծո Որդին, ով ունի կրակի բոցի նման աչքեր» (Հայտ. Բ 18): Սա հայտնապես երեւում է նաեւ Որդու մասին Նրա բոլոր խոսքերում:

*22. Տեր Քրիստոսը Որդի է Սուրբ Երրորդության Անձերից մեկը լինելու իմաստով:*

Ահա թե ինչու Տեր Հիսուս Քրիստոսն ասաց աշակերտներին. «Գնացեք այսուհետեւ, աշակերտ դարձրեք բոլոր հեթանոսներին, մկրտեք նրանց Հոր, Որդու եւ Սուրբ Հոգու անունով» (Մատթ. ԻԸ 19): «Անուն» բառն այստեղ գործածված է եզակի թվով՝ ցույց տալու համար, որ Երեքը Մեկ են:

Քանի որ Տիրոջ աստվածորդիությունն ընդհանրական որդիություն չէ, այլ Նրա աստվածությունը ցույց տվող հատուկ որդիություն, ուստի Նա կոչվում է «Որդին» (որոշյալ առումով):

<u>ՈՐԴԻՆ</u>

*23. Որոշյալ առումով գործածվող «Որդին» Սուրբ Գրքում վերաբերում է միայն Տեր Հիսուս Քրիստոսին:*

Տեր Քրիստոսն Իր մասին ասում է. «Իսկ արդ, եթե Որդին ձեզ ազատի, ճշմարտապես ազատ կլինեք» (Հովհ. Ը 36): Նա այս խոսքով հայտնում է, որ եկել է նրանց ազատելու իրենց մեղքերից: Ս. Հովհաննես Ավետարանիչն էլ ասում է. «Ով ընդունում է Որդուն, ընդունում է նաեւ կյանքը, իսկ ով չի ընդունում Աստծո Որդուն, նաեւ կյանքը չի ընդունում» (Ա Հովհ. Ե 12)՝ այսպիսով մեկ խոսքում միաժամանակ գործածելով «Որդին» եւ «Աստծո Որդին» ձեւերը՝ ցույց տալու համար, որ դրանք վերաբերում են միեւնույն Անձին: Ս. Հովհաննեսը նաեւ ասում է. «Եվ մենք տեսանք ու վկայում ենք, որ Հայրն ուղարկեց Իր Որդուն իբրեւ աշխարհի Փրկիչ» (Ա Հովհ. Դ 14): Հետեւաբար, երբ «Որդին» եզրը հանդես է գալիս միայնակ (առանց լրացման), վերաբերում է Տեր Հիսուս Քրիստոսին:

Ս. Հովհաննես Մկրտիչը Տեր Հիսուսի մասին խոսելիս նույն ձեւն է գործածում. «Հայրը սիրում է Որդուն եւ ամեն ինչ Նրա ձեռքը տվեց, եւ ով չի հնազանդվում Որդուն, կյանք չի տեսնի, այլ Աստծո բարկությունն է մնում նրա վրա» (Հովհ. Գ 35-36): Տեր Հիսուսն է, իհարկե, վերոհիշյալ խոսքերում հիշատակվող Որդին, ում տրվել է Հորից ամեն ինչ, նույնիսկ Իրեն հավատացողներին հավիտենական կյանք տալու կարողությունը:

Տեր Հիսուս Քրիստոսն Ինքն էլ Իրեն կոչում է «Որդին» եւ «Աստծո Որդին»:

*24. Հրեաները հասկացան, որ այս աստվածորդիությունն Աստվածություն է նշանակում:*

Այդ պատճառով էլ, երբ բարձրագույն ատյանում Նրան հարցրին, թե Ի՞նքն է Քրիստոսը՝ Աստծո Որդին, եւ Նա դրական պատասխան տվեց, «քահանայապետը պատռեց իր հագուստը եւ ասաց. «Հայհոյե՛ց, այլեւս մեր ինչի՞ն են պետք վկաներ, ահա այժմ լսեցիք դրա հայհոյությունը»» (Մատթ. ԻԶ 65):

Ս. Հովհաննեսի Ավետարանում էլ գրված է. «Ուստի հրեաներն է՛լ առավել էին ցանկանում սպանել Նրան, որովհետեւ ոչ միայն շաբաթն էր խախտում, այլեւ Աստծուն Իր Հայրն էր կոչում՝ Իրեն հավասարեցնելով Աստծուն» (Հովհ. Ե 18):



Այսպիսով, Նրա աստվածությունն էր պատճառը Նրան սպանելու հրեաների փափագի, ինչպես եւ ասացին Նրան. «Բարի գործի համար չէ, որ քարկոծում ենք Քեզ, այլ հայհոյության, եւ որ Դու մարդ ես, սակայն Քեզ Աստված ես դարձնում» (Հովհ. Ժ 33):

Նաեւ դա էր Նրա դեմ կայացված դատավճիռը, որով խնդրեցին Պիղատոսին խաչել Նրան՝ ասելով. «Մենք օրենք ունենք, եւ ըստ մեր օրենքի՝ Նա պիտի մեռնի, որովհետեւ Իրեն Աստծո Որդի է դարձրել» (Հովհ. ԺԹ 7): Բնականաբար, ընդհանրական որդիությունը, որի մասին խոսում է Եսայի մարգարեն՝ «Տե՛ր, Դու մեր Հայրն ես» (Ես. ԿԴ 8), չի կարող մահվան դատապարտության պատճառ դառնալ. սրա համար պատճառ կարող է լինել միայն այն հատուկ որդիությունը, որը ենթադրում է աստվածություն եւ Աստծո հետ հավասարություն:

*Շարունակելի*

***Թարգմանությունը՝ Ս. Ստամբոլցյանի***

# ՏԵՐԻ ԴՐՈՇՄԸ

## (ըստ Եկեղեցու ուսուցման)

### Հատվածը տողագրվում է կրճատումներով

*Սկիզբը՝ թիվ 22-24*

«Աղաչում եմ ձեզ, եղբայրնե՛ր, աչքի անցկացրեք այնպիսիներին, որ հերձվածներ եւ գայթակղություններ են առաջ բերում այն վարդապետությունից դուրս, որը դուք սովորել եք. եւ խորշեցե՛ք նրանցից, որովհետեւ այնպիսիները մեր Տիրոջը՝ Քրիստոսին չեն ծառայում, այլ՝ իրենց որովայնին. եւ քաղցրախոսությամբ ու կեղծ գովասանքներով հրապուրում են անմեղների սրտերը: Եվ խաղաղության Աստվածը շուտով պիտի խորտակի սատանային ձեր ոտքերի տակ» (Հռոմ. ԺԶ 17-18, 20):



«Իսկ եթե մեկն ուզում է առարկել, մենք չունենք այդպիսի սովորություն, ոչ էլ՝ Աստծո եկեղեցիները» (Ա Կորնթ. ԺԱ 16), այլ պարզապես կասենք. «Նա, ով ամբարիշտ է, թող ամբարշտություն անի, ով կեղտոտ է, թող կեղտոտ լինի, ով արդար է, թող արդարություն անի, եւ ով սուրբ է, թող սուրբ լինի: Ահա գալիս եմ շուտով, եւ ինձ հետ են իմ վարձերը, որպեսզի հատուցեմ յուրաքանչյուրին՝ ըստ իր գործերի: Երանելի՜ են նրանք, որ պահում են նրա պատվիրանները: Նրանք իրավունք ունեն ուտելու կենաց ծառից եւ մտնելու քաղաքի դռներով: Իսկ շներն ու կախարդները, մարդասպաններն ու կռապաշտները եւ բոլոր նրանք, որ սիրում են սուտը, դուրս պիտի նետվեն: Եթե մեկը բան պակասեցնի այս գրքի մարգարեության խոսքերից, Աստված պիտի պակասեցնի եւ պիտի կտրի նրա բաժինը կենաց ծառից եւ սուրբ քաղաքից՝ ինչպես որ գրված է այս գրքում: Ով այս մասին վկայեց, ասաց. «Ես գալիս եմ շուտով»: Ամեն: Ե՛կ, Տե՛ր Հիսուս Քրիստոս:

Մեր Տեր Հիսուս Քրիստոսի շնորհը լինի բոլոր սրբերի վրա: Ամեն» (Հայտն. ԻԲ 11-12, 14-15, 19-21):

**Հետգրություն**

Այսօր հեշտ է դատապարտել ու չարախոսել հոգեւորականներին: Այո՛, մենք մեղավոր ենք ու անարժան: Մենք դա ընդունում ենք: Բայց մենք ձեզ չենք դատում (չնայած ունենք այդ իշխանությունը), հակառակը. փորձում ենք օգնել ձեզ, կիսել ձեր ցավը: «Դու ո՞վ ես, որ դատում ես ուրիշի ծառային. կանգնած լինի, թե ընկած՝ իր տիրոջ համար է. բայց նա կկանգնի, որովհետեւ կարո՛ղ է Տերը նրան կանգուն պահել» (Հռոմ. ԺԴ 4): «Տիրոջն է դատելու իրավունքը, եւ ոչ թե քոնը,- ասում է սուրբ Հովհան Ոսկեբերանը,- դու Տեր չես, այլ հետին ծառա, դու՝ ոչխար ես, մի՛ դատիր հովվին, որպեսզի չպատժվես այն բանի համար, ինչի մեջ մեղադրում ես նրան»: Այո՛, մենք հայրեր ենք կոչվում, այո՛, մենք վատն ենք, բայց դուք մի եղեք Քամի նման, ով պատմեց հոր մերկության մասին եւ դրա համար անիծվեց: Հակառակը. ծածկե՛ք մեր մերկությունը Եկեղեցու թշնամիներից: Չէ՞ որ մենք չենք բացահայտում ձեր խոստովանած մեղքերը: Սուրբ Հովհան Ոսկեբերանն ասում է՝ Տերն Ինքն է թույլ տալիս, որ հոգեւորականները մեղքի մեջ ընկնեն, եւ դա այն բանի համար, որպեսզի ներողամիտ լինեն ձեր տկարությունների հանդեպ: Ինչ կլիներ, եթե Պետրոսը չմեղանչեր, կամ հրեշտակները լինեին քահանա՝ ոչ ոք չէ՛ր փրկվի: Այո՛, հնարավոր է, որ դուք ավելի զորավոր եք հավատի մեջ, եւ ավելի հոգեւոր, քան մենք: Արդ, կրեք մեր բեռը եւ աղոթեք մեզ համար: Չէ՞ որ երբ դուք աշխատում, հանգստանում կամ զբաղված եք ինչ-որ գործերով, մենք աղոթում ենք ձեզ համար: Դուք չգիտեք մեր ցավը եւ այդ պատճառով էլ դատում եք մեզ, իսկ մենք, իմանալով ձեր ցավը, կրում ենք այն խոնարհությամբ:

***Տ. Ղեւոնդ աբեղա ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ***
***Միաբան Երուսաղեմի Հայոց Պատրիարքության***

**ՔՐԻՍՏՈՆՅԱ ՀԱՅԱՍՏԱՆ**

Կրոնական, մշակութային, լրատվական երկշաբաթաթերթ

**Հիմնադիր՝**
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին

**Հրատարակիչ՝**
Ս. Էջմիածնի Քրիստոնեական դաստիարակության կենտրոն

**Գլխավոր խմբագիր՝**
Աստղիկ Ստամբոլցյան

**Գրանցման վկայական՝ 624**
**Խմբագրության հասցեն՝**
ք. Վաղարշապատ, ՔԴԿ

**հեռախոս՝**
**(0+31) 54510**
Մայր Աթոռ Ս. Էջմիածնի տպարան
Ստոր. տպագր. 17.1.2005 թ.

**Տպաքանակը՝ 2500**
**Գինը՝ 50 դրամ**